



0084, Армения, Ереван, ул. Зор. Андраники 1  
Тел: 72 00 10 Факс: 72 01 21

Zor. Andranik st. 1, Yerevan, Armenia, 0084  
Tel: 72 00 10. Fax: 72 01 21  
E-mail: hvenbec@gmail.com

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ  
ԲՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
«ԲԱՐՁՐԱՎՈՒՆ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ  
0084 Հայաստան, Երևան, Զոր. Անդրանիկի 1,  
Հեռ. 72 00 10, Ֆաքս. 72 01 21

No. 32-d

06 / 03 2015թ.

## Հ Ր Ա Մ Ա Ն

### «ԲԱՐՁՐԱՎՈՒՆ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ 2015թ. ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 2015թ. Գործարար ծրագրով և սեփական ուժերով իրականացվող աշխատանքների ժամանակին կատարման և հաշվետվությունների ներկայացման համար

## Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

### 1. Մասնաճյուղերի տնօրեններին՝

Ապահովել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 2015 թվականի նախատեսված մասնաճյուղին վերաբերող աշխատանքների, էլեկտրական սարքավորումների և օդային գծերի շահագործման ու նորոգման աշխատանքների, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ էլեկտրական ցանցերի անվտանգության տեխնիկայի և աշխատանքի պաշտպանության միջոցառումների կատարումը և մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը ներկայացնել հաշվետվություն աշխատանքների կատարողականի վերաբերյալ:

2. Ընկերության վարկային ներդրումների և տեխնիկական վերազինման վարչության, էլեկտրական ցանցերի շահագործման, աշխատանքի անվտանգության ապահովման և հուսալիության ծառայությունների, կապիտալ շինարարության և ծրագրի կատարման համար պատասխանատու մյուս ծառայությունների և բաժինների պետերին՝

Հետևողականորեն հսկել իրենց պատասխանատվության սահմաններում գտնվող վերը նշված նախատեսված աշխատանքների կատարման ընթացքին և տրամադրել այդ աշխատանքների կատարման համար անհրաժեշտ մասնագիտական օգնություն: Մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը ամփոփ հաշվետվություններ ներկայացնել արտադրատեխնիկական ծառայություն նշված աշխատանքների կատարողականի վերաբերյալ:

### 3. Ընկերության արտադրատեխնիկական ծառայության պետին՝

Վերլուծել ներկայացված հաշվետվությունները և մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ գլխավոր ճարտարագետին

ներկայացնել ամբողջական հաշվետվություն Գործարար ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ:

4. Գլխավոր տնօրենի տեղակալներ Կ.Հարությունյանին և Դ.Գևորգյանին՝

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 2015 թվականի Գործարար ծրագիրը սահմանված ժամկետներում կատարելու նպատակով աջակցել այդ ծրագրի իրականացման անհրաժեշտ ֆինանսավորման և նյութերի ձեռք բերման հարցում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել գլխավոր ճարտարագետ Ս. Իգիտբաշյանի վրա:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ



Ա. ԱՆԱՆՅԱՆ